**Հավելված 7**
**«ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/7»* ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/7-2

ք. Սևան «27» ապրիլի 2019 թ.

ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն՝ Շավարշ Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 117205 /մեկ հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր հինգ/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց >> ՓԲԸ | <<Արֆարմացիա>> ՓԲԸ |
| Ք.Սևան Կարմիր Բանակի 68 | Ք. Ռաֆֆու 11 |
| <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Սևանի մ/ճ | <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ |
| Հ/Հ 163148133255 | Հ/Հ 163008100220 |
| ՀՎՀՀ 08601459 | ՀՎՀՀ 02505735 |
| Տնօրեն՝ _____ Շ. Գրիգորյան | Տնօրեն՝ _____ Ա. Հովհաննիսյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*« 27 » ապրիլի 2019թ. կնքված*
*ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/7-2 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման* | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը *** | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը*** | Ժամկետը |
| 2 | 33611150 | Պանկրեատին (լիպազ, ամիլազ, պրոտեազ) | Գերմանի | Պանկրեատին (լիպազ, ամիլազ, պրոտեազ) /Մեզիմ ֆորտե / | դեղահատեր թաղանթապատ | 33.3 | 1665 | 50 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 50 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 4 | 33621520 | Էնալապրիլ | Բելոռուս | Էնալապրիլ 5մգ | դեղահատեր | 4.59 | 11475 | 2500 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 2500 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 6 | 33661170 | Պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ) | Հայաստան | Պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ) /Նովոկային 0.5 % 5 մլ/ | լուծույթ ներարկման | 30.6 | 21420 | 700 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 700 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 8 | 33621710 | Ատենալոլ | Բելոռուս | Ատենալոլ 50 մգ | դեղահատեր թաղանթապատ | 3.71 | 1113 | 300 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 300 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 9 | 33621590 | Ֆուրասեմիդ | Հայաստան | Ֆուրասեմիդ 40մգ | դեղահատեր | 3.09 | 309 | 100 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 100 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 10 | 33671126 | Բրոմհեքսին | Բելոռուս | Բրոմհեքսին 8 մգ | դեղահատեր | 2.72 | 272 | 100 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 100 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 11 | 33621380 | Դիգոքսին | Հայաստան | Դիգոքսին 0.25մգ | դեղահատեր | 5.49 | 1098 | 200 | Ք. Սևան Կարմիր | 200 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | Բանակի 68 | | 30.06.2019թ |
| 13 | 33631310 | Դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) | Սերբիա | Դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) /Դիկլոֆենակ 50 մգ/ | դեղահատեր թաղանթապատ, աղելույծ | 14.7 | 441 | 30 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 30 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 15 | 33631290 | Իբուպրոֆեն | Սերբիա | Իբուպրոֆեն 400մգ | դեղահատեր թաղանթապատ | 18.9 | 3780 | 200 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 200 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 16 | 33651150 | Ֆլյուկոնազոլ | Հայաստան | Ֆլյուկոնազոլ 150մգ | դեղապատիճ | 152 | 7600 | 50 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 50 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 17 | 33691145 | Մագնեզիումի սուլֆատ | Հայաստան | Մագնեզիումի սուլֆատ 250մգ/մլ, 5մլ | լուծույթ ներարկման | 31 | 930 | 30 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 30 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 19 | 33631170 | Տետրացիկլին | Հայաստան | Տետրացիկլին աչքի քսուք 1% | ակնաքսուք | 555 | 1665 | 3 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 3 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 27 | 33631430 | Դեքսկետոպրոֆեն (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլ | Գերմանի | Դեքսկետոպրոֆեն (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլ /Դեքսալգին 25մգ/ | դեղահատեր թաղանթապատ | 184.4 | 9220 | 50 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 50 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 31 | 33691232 | Նիմեսուլիդ | Գերմանի | Նիմեսուլիդ /Նիմեսիլ 2գ/ | փաթեթ | 92.4 | 4620 | 50 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 50 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 36 | 33691176 | Վիտամին Բ 6 | Հայաստան | Վիտամին Բ 6 1մլ | սրվակ | 16.6 | 3320 | 200 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 200 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 42 | 33691176 | Էսկարդ | Հայաստան | Էսկարդ 30մլ | ֆլակոն | 197 | 15760 | 80 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 80 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 46 | 33611350 | Ասկորբինաթթու | Հայաստան | Ասկորբինաթթու /Վիտամին Ց 500 մգ/ | դեղահատեր | 23 | 9200 | 400 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 400 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 49 | 33621240 | Ցիանոկոբալամին | Հայաստան | Ցիանոկոբալամին /Վիտամին Բ 12 0.5մգ/մլ 1մլ/ | լուծույթ ներարկման | 18.4 | 2208 | 120 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 120 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 50 | 33621690 | Կարվեդիրոլ | Լատվիա | Կարվեդիրոլ 12,5մգ | դեղահատեր | 28.5 | 2565 | 90 | Ք. Սևան Կարմիր | 90 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | Բանակի 68 | | 30.06.2019թ |
| 51 | 33671131 | Լորատադին | Հայաստան | Լորատադին 10 մգ | դեղահատեր | 21.7 | 2170 | 100 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 100 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 52 | 33691123 | Մեբենդազոլ | Հայաստան | Մեբենդազոլ 500 մգ | դեղահատեր | 362 | 7240 | 20 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 20 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 54 | 33631210 | Բետամեթազոն (բետամեթազոնի վալերատ) | Հայաստան | Բետամեթազոն (բետամեթազոնի վալերատ) /Բետամետազոնի 1մգ/գ, 15գ այլումինե պարկուճ/ | քսուք | 873 | 6984 | 8 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 8 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |
| 59 | 33671130 | Դիֆենհիդրամին (դիֆենհիդրամին ի հիդրոքլորիդ) | Հայաստան | Դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) /Դիմեդրոլ 10մգ/մլ, ամպուլներ 1մլ/ | լուծույթ ներարկման | 21.5 | 2150 | 100 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 100 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 30.06.2019թ |

**Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա հունիսի 30-ը:*

***Վաճառողը պարտավոր է պայմանագրի կատարման փուլում ներկայացնել համապատասխանության սերտիֆիկատ, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:*

****Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի համաձայնեցմանը ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, որից հետո միայն մատակարարել ապրանքները՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրերի և համաձայնեցված նմուշների: Մատակարարման կոնկրետ օրը և քանակը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով: Մատակարարումը իրականացնել աշխատանքային օրերին 09:00-ից մինչև 16:00:*

***դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝*

*ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,*

*բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,*

*գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց >> ՓԲԸ
Ք.Սևան Կարմիր Բանակի 68
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Սևանի մ/ճ
Հ/Հ 163148133255
ՀՎՀՀ 08601459

Տնօրեն՝ _____ Շ. Գրիգորյան
/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Արֆարմացիա>> ՓԲԸ
Ք. Ռաֆֆու 11
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163008100220
ՀՎՀՀ 02505735

Տնօրեն՝ _____ Ա Հովհաննիսյան
/ստորագրություն/

Կ.Տ

*Հավելված N 2*
*« 27 » ապրիլի 2019թ. կնքված*
*ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/7-2 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 33611150 | Պանկրեատին (լիպազ, ամիլազ, պրոտեազ) | | | | | 1665 | 1665 | 1665 | 1665 | 1665 | 1665 | 1665 | 1665 | 1665 |
| 4 | 33621520 | Էնալապրիլ | | | | | 11475 | 11475 | 11475 | 11475 | 11475 | 11475 | 11475 | 11475 | 11475 |
| 6 | 33661170 | Պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ) | | | | | 21420 | 21420 | 21420 | 21420 | 21420 | 21420 | 21420 | 21420 | 21420 |
| 8 | 33621710 | Ատենալոլ | | | | | 1113 | 1113 | 1113 | 1113 | 1113 | 1113 | 1113 | 1113 | 1113 |
| 9 | 33621590 | Ֆուրասեմիդ | | | | | 309 | 309 | 309 | 309 | 309 | 309 | 309 | 309 | 309 |
| 10 | 33671126 | Բրոմհեքսին | | | | | 272 | 272 | 272 | 272 | 272 | 272 | 272 | 272 | 272 |
| 11 | 33621380 | Դիգոքսին | | | | | 1098 | 1098 | 1098 | 1098 | 1098 | 1098 | 1098 | 1098 | 1098 |
| 13 | 33631310 | Դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) | | | | | 441 | 441 | 441 | 441 | 441 | 441 | 441 | 441 | 441 |
| 15 | 33631290 | Իբուպրոֆեն | | | | | 3780 | 3780 | 3780 | 3780 | 3780 | 3780 | 3780 | 3780 | 3780 |
| 16 | 33651150 | Ֆլյուկոնազոլ | | | | | 7600 | 7600 | 7600 | 7600 | 7600 | 7600 | 7600 | 7600 | 7600 |
| 17 | 33691145 | Մագնեզիումի սուլֆատ | | | | | 930 | 930 | 930 | 930 | 930 | 930 | 930 | 930 | 930 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | 33631170 | Տետրացիկլին | | | | | 1665 | 1665 | 1665 | 1665 | 1665 | 1665 | 1665 | 1665 | 1665 |
| 27 | 33631430 | Դեքսկետոպրոֆեն (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլ | | | | | 9220 | 9220 | 9220 | 9220 | 9220 | 9220 | 9220 | 9220 | 9220 |
| 31 | 33691232 | Նիմեսուլիդ | | | | | 4620 | 4620 | 4620 | 4620 | 4620 | 4620 | 4620 | 4620 | 4620 |
| 36 | 33691176 | Վիտամին Բ 6 | | | | | 3320 | 3320 | 3320 | 3320 | 3320 | 3320 | 3320 | 3320 | 3320 |
| 42 | 33691176 | Էսկարդ | | | | | 15760 | 15760 | 15760 | 15760 | 15760 | 15760 | 15760 | 15760 | 15760 |
| 46 | 33611350 | Ասկորբինաթթու | | | | | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 | 9200 |
| 49 | 33621240 | Ցիանոկոբալամին | | | | | 2208 | 2208 | 2208 | 2208 | 2208 | 2208 | 2208 | 2208 | 2208 |
| 50 | 33621690 | Կարվեդիրոլ | | | | | 2565 | 2565 | 2565 | 2565 | 2565 | 2565 | 2565 | 2565 | 2565 |
| 51 | 33671131 | Լորատադին | | | | | 2170 | 2170 | 2170 | 2170 | 2170 | 2170 | 2170 | 2170 | 2170 |
| 52 | 33691123 | Մեբենդազոլ | | | | | 7240 | 7240 | 7240 | 7240 | 7240 | 7240 | 7240 | 7240 | 7240 |
| 54 | 33631210 | Բետամեթազոն (բետամեթազոնի վալերատ) | | | | | 6984 | 6984 | 6984 | 6984 | 6984 | 6984 | 6984 | 6984 | 6984 |
| 59 | 33671130 | Դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) | | | | | 2150 | 2150 | 2150 | 2150 | 2150 | 2150 | 2150 | 2150 | 2150 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց >> ՓԲԸ
Ք.Սևան Կարմիր Բանակի 68
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Սևանի մ/ճ
Հ/Հ 163148133255
ՀՎՀՀ 08601459

Տնօրեն՝ _____ Շ. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Արֆարմացիա>> ՓԲԸ
Ք. Ռաֆֆու 11
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163008100220
ՀՎՀՀ 02505735

Տնօրեն՝ _____ Ա. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ.